ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 մարտի երեքշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

41
(2891)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽՈՍՏԱՑԵԼ Է 10 ՕՐԻՑ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ

Մարտի 12-ին՝ մամուլի ասուլիսի ժամանակ էր վարչապետը խոստացել այցելել Տավուշ եւ զրուցել բնակիչների հետ: Այդ օրը գործադիրի ղեկավարը հայտարարեց, որ ինքը պատրաստ է գնալ հատվածական դելիմիտացիայի՝ չբացառելով, որ գործընթացը կսկսվի հենց Տավուշի մարզից:

Մարտի 18-ին արդեն Փաշինյանը հանդիպեց Ոսկեպարի, Բաղանիսի եւ հարակից բնակավայրերի բնակիչների հետ: Հանդիպումը հարթ չէր անցել. Փաշինյանը, ըստ բնակիչների, ասել է՝ եթե զիջումների չգնանք, պատերազմ կսկսվի:

Վերջին օրերին Տավուշի սահմանամերձ բնակավայրերի բնակիչները ակնհայտորեն լարված են եւ սկսել են ագրեսիվ դիմավորել գյուղեր այցելողներին: Ոստիկանությունն արգելում է շատերի մուտքն անգամ, նույնիսկ եկեղեցի մտնելն են արգելել, օրինակ՝ Մարտական եղբայրության ներկայացուցիչներին:

Եւ, ահա, Փաշինյանի խոստացված մեկշաբաթյա ժամկետը երեկ լրացավ, սակայն ՀՀ վարչապետը Վրաստանից Հայաստան եկած պաշտոնական պատվիրակություններին դիմավորելու գործով էր զբաղված եւ տավուշեցիների մոտ ոչ էլ ներկայացուցիչ ուղարկեց:

Բնակիչների մի մեծ խումբ «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեց, որ Փաշինյանը խոստացել է եթե ոչ 7, ապա 10 օր անց կվերադառնա՝ լսելու տեղի բնակիչների առաջարկները եւ կարծիքները: Նա ասել է՝ եթե անգամ ինքն էլ չկարողանա գալ, իր ներկայացուցիչը կգա եւ կլսի նրանց խնդիրները: Հենց այս պատճառով տավուշեցիները, որոնց գրեթե 70 %-ը խորհրդարանական ընտրություններին քվեարկել է Փաշինյանի օգտին, լռում են եւ հրաժարվում մեկնաբանել իրավիճակը կամ կարծիք հայտնել: Նրանք դեռ հավատով սպասում են իրենց համերկրացի Նիկոլ Փաշինյանի խոստման իրագործմանը: Եթե հիշենք «Ժողովուրդ» օրաթերթի՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ստերի մասին պատմող շարքը, ապա կարող ենք ասել, որ նրա համագյուղացիների սպասումները, հնարավոր է, այդպես էլ չարդարանան, կամ նրանք խորը հիասթափություն ապրեն:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ երեկ քննիչները այցելել են «Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոց ու մոտ 10 րոպե մնացել վերակենդանացման բաժանմունքում, որտեղ ապաքինվում է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Նոր Նորքի բաժնի մոտ նռնակի պայթյունից վիրավորված Արթուր Մովսիսյանը: Մեզ հասած լուրերի համաձայն՝ վիրավորված Արթուր Մովսիսյանը հիվանդասենյակում բարձրաձայն դիմել է ներկաներին եւ ասել. «Հելե՛ք ոտքի. ինչ արել եմ, Ձեզ համար եմ արել»: Հիշեցնենք՝ ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝ նռնակով զինված քաղաքացիներից մեկը Վարդգես Գեւորգյանն է, որը Արարատի մարզից է, մյուսը՝ Արթուր Մովսիսյանը՝ Զորաղբյուրից: Նշենք, որ Արթուր Մովսիսյանն Ազգային ժողովրդական բեւեռի աջակիցներից է, որի որդին զոհվել է 44-օրյա պատերազմում: Հիշեցնենք նաեւ, որ մարտի 24-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության Երեւան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բաժին 3 անձինք էին ներխուժել եւ նռնակ պայթեցրել: Ներխուժած անձանցից երկուսը ոստիկանության բաժնում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով ստացած բեկորային վնասվածքներով տեղափոխվել են բուժհաստատություն: Մյուսը ԱԱԾ ծառայողների կողմից վնասազերծվել է, ձերբակալված է: Նա Կոտայքի մարզի բնակիչ Ստեփան Հովակիմյանն է:

«Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է փաստերով ներկայացրել, թե Նիկոլ Փաշինյանի եւ նրա թիմակիցների գաղափարները եւ դիրքորոշումները որեւէ հարցի շուրջ ինչ տրանսֆորմացիաների են ենթարկվել իշխանության գալուց հետո: Բազմիցս իրենց «սկզբունքայնությամբ» աչքի ընկած թավշյահեղափոխականները ցանկացած հարցի մասով ընդդիմադիր եղած ժամանակ այլ բան էին ասում եւ անում, իսկ իշխանության գալուց հետո՝ դրա լրիվ հակառակը: Ամուլսարի ոսկու հանքի շահագործումը եւս բացառություն չէ: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը կառավարությունից տեղեկանում է, որ «Լիդիան Արմենիա» ընկերության 100 տոկոս բաժնետոմսերի 12,5 տոկոսը կնվիրաբերվի ՀՀ կառավարությանը: Բաժնետոմսերի կառավարման լիազորությունը կվերապահվի էկոնոմիկայի նախարարությանը: Այսօր տեղի կունենա բաժնետոմսերը ՀՀ կառավարությանը նվիրելու պայմանագրի ստորագրման արարողությունը: Հուշագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկած 5000 դրամ անվանական արժեքով հասարակ բաժնետոմսերի 12, 5 տոկոսը, այսինքն՝ 12 հազար 503 հատ ընդհանուր թվով բաժնետոմսեր կընդունի: 2024թ. հունվարի 18-ի նիստում Նիկոլ Փաշինյանը հայտարարել էր, թե «Լիդիան Արմենիա»-ի այս «նվերը» պատկանում է Հայաստանի ժողովրդին, եւ որ «Ամուլսարի հանքի շահագործումն այս մոդելով բազմաթիվ մտահոգություններ է փարատում»: Թե ինչ մտահոգություններ է փարատվում, պարզ չէ, բայց թերեւս արժե հիշել, թե ընդդիմադիր եղած ժամանակ ինչպես էին կարկառուն ՔՊ-ականները, Լենա Նազարյանի գլխավորությամբ, ինքնամոռաց կռիվ տալիս ընդդեմ հանքի շահագործման՝ համարելով այն բնապահպանական աղետ: Իսկ ի՞նչ է փոխվել այսօր «բնապահպան» ՔՊ-ականների մոտ, որ ոչ միայն դեմ չեն Ամուլսարի շահագործմանը, այլեւ այն համարում են «նվեր». թերեւս՝ ոչինչ, պարզապես այլեւս իրենց շահերն են խոսում, ու հանուն դրա պատրաստ են աչք փակել ամեն ինչի վրա:



Հայաստանի իշխանություններն անգամ համազգային աղետի եւ սուգի պարագայում չեն կարողանում բարեկամ երկրի հանդեպ սոլիդարություն ցուցաբերել ու ապրումակցել: Մոսկվայի «Կրոկուս սիթի հոլ»-ում ահաբեկչության կապակցությամբ Ռուսաստանում հայտարարված համազգային սգո օրվա առիթով ՀՀ-ում Ռուսաստանի դեսպանատանը սգո հուշամատյան է բացվել երկուշաբթի օրվանից: Այնտեղ գրառում էին արել եւ իրենց ցավակցությունն էին հղել հայաստանյան մի շարք հասարակական, քաղաքական գործիչներ, ընդդիմադիր գործիչներ, քաղաքացիներ եւ Ազգային ժողովի պատգամավորներ: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ անգամ աղետի դեպքում Հայաստանի իշխանությունները չեն գնացել ՌԴ դեսպանատուն, չեն ցավակցել ռուս անմեղ զոհերի առթիվ: Իշխանականներից միայն ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանն ու ՔՊ-ական ռուս պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովն են երկուշաբթի գնացել ՌԴ դեսպանատուն եւ ցավակցական գրառում կատարել մարտի 22-ին Մոսկվայում տեղի ունեցած ահաբեկչության կապակցությամբ: Իսկ ո՞ւր էին մյուս ՔՊ-ականները, զբաղվա՞ծ էին, թե՞ Փաշինյանն արգելել էր այդ օրը գնալ ՌԴ դեսպանատուն: Ուշագրավ է նաեւ, որ անտարբերություն էին ցուցաբերել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի եւ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջեւ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի ՔՊ-ական անդամները: Իսկ ովքե՞ր են այս հանձնաժողովի ՔՊ-ական «անտարբեր» անդամները. հանձնաժողովը ղեկավարում է ԱԺ փոխնախագահ Հակոբ Արշակյանը, անդամներն են ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը, պատգամավորներ Գուրգեն Արսենյանը, որը մի ժամանակ հավակնում էր ՌԴ-ում ՀՀ դեսպանի պաշտոնին, Վլադիմիր Վարդանյանը, Ծովինար Վարդանյանը, Արուսյակ Ջուլհակյանը, Վահե Ղալումյանը, Վաղարշակ Հակոբյանը, Հասմիկ Հակոբյանը, Բաբկեն Թունյանը, Միքայել Թումասյանը եւ Շիրակ Թորոսյանը:



ԶՐՈՒՅՑ

«ՄԵՆՔ ԿԿԱՆԳՆԵՆՔ ՊԵՏԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ԱՌԱՋ»

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ասուլիսից հետո Տավուշի մարզի 4 գյուղերի ճակատագիրը դրվեց հարցականի տակ: Այս հայտարարությունից հետո առաջինը «Հայաքվե» նախաձեռնությունն էր, որ մեկնեց Տավուշ՝ Ոսկեպար, հանդես եկավ աջակցող հայտարարությամբ: ArmLur.am-ը տաղավարում զրուցել է «Հայաքվե» նախաձեռնության խորհրդի անդամ, միջազգայնագետ Արմեն Մանվելյանի հետ:

-Պարոն Մանվելյան, վերջերս՝ Նիկոլ Փաշինյանի վերջին ասուլիսից հետո, երբ հարցականի տակ դրվեց Տավուշի 4 գյուղերի ճակատագիրը, «Հայաքվե» նախաձեռնությունը առաջիններից էր, որ մեկնեց Տավուշի մարզ եւ Ոսկեպարից հանդես եկավ հայտարարությամբ: Կարո՞ղ եք ասել՝ ինչ սպառնալիք է ներկայացնում Տավուշի 4 գյուղերի հանձնումը, եթե նման պահանջները Նիկոլ Փաշինյանի եւ Ալիեւի կողմից շարունակվեն:

-Այստեղ մի քանի խնդիր կա. առաջինը քաղաքական թեմատիկան է, որ եթե դու սկսում ես զիջման գործընթացը, որ մենք արդեն տեսնում ենք երեք-չորս տարի շարունակ, ապա սա կանգ չի առնելու: Այնպես չէ, որ ադրբեջանցիները առաջ կգան ու կասեն՝ լավ, բավարար է, առաջ չենք գնա. դրանից հետո նրանք կպահանջեն անկլավները եւ այլն: Այս ամենը անօրինական է, ՀՀ Սահմանադրության համաձայն, ՀՀ օրենքների համաձայն՝ ՀՀ տարածքում ադրբեջանական տարածք չկա, անկլավներ չկան: Ցանկացած մեկը, որ ասում է՝ սա ադրբեջանական տարածք է, ինքը պետական հանցագործություն է իրականացնում, քանի որ խախտում է ՀՀ Սահմանադրությունը: Եթե, Աստված չանի, իսկապես այդ գործընթացը սկսվի, այսինքն՝ զորքերը հետ նահանջեն եւ տարածքները զիջեն, սա կլինի պետական մասշտաբի հանցագործություն: Ի՞նչ տեղի կունենա դրանից հետո. նայեք, մի քանի ռազմավարական խնդիր ունենք՝ կապված այդ շրջանների հետ. նախ՝ դա մեզ համար կարեւոր է՝ որպես Վրաստանի հետ կապի միջոց, այնտեղով է անցնում նաեւ մեր գազամուղը եւ այլն: Այդ ամենը երբ անցնում է թշնամու վերահսկողության տակ, մենք խնդիրների առաջ ենք կանգնում: Տեսականորեն հնարավոր է շրջանցող գազամուղ սարքել, բայց սա մեկ-երկու օրվա գործ չէ, այլ ամիսների աշխատանք է, որը չի արվել: Եթե այս ամենը տեղի ունենա, մենք կկանգնենք պետական ճգնաժամի առաջ:

-Պարոն Մանվելյան, ներկայումս խոսում ենք միայն Տավուշի 4 գյուղերի մասին, սակայն եթե մի քիչ հետ նայենք, Նիկոլ Փաշինյանը եւ Իհլամ Ալիեւը ինչեցնում էին արտահայտություններ, որ Տիգրանաշենը եւս դասվում է անկլավների շարքին: Եթե Ադրբեջանը Տավուշում հարցը լուծի իր օգտին, արդյոք Երասխի, Տիգրանաշենի մասով խոսակցություն տեղի չի՞ ունենա:

-Մի բան պիտի հստակ հասկանանք. Ադրբեջանի համար այս անկլավները էական են այնքանով, ինչքանով նա կարողանում է ներխուժել Հայաստանի տարածք, եւ կարող է հանգիստ տեղադրել զորքեր, եւ Հայաստանը, փաստորեն, պառակտվում է: Եթե Դուք Տավուշի քարտեզը նայեք, կտեսնեք՝ եթե ինքը անկլավները վերցնում է, ամբողջովին կտրում է Տավուշի հյուսիսային մասը հարավից, եւ մոտենում է մինչեւ Վանաձոր, այսինքն՝ Հայաստանը հայտնվում է խոցելի ու վտանգավոր վիճակում:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔ ՉԻ ԿԱՌՈՒՑՎՈՒՄ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է

2018թ.-ի հուլիսին Նիկոլ Փաշինյանը մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց. «Հայաստանն ակտիվ բանակցում է Վերին Լարսին այլընտրանք գտնելու ուղղությամբ»:

Այնուհետեւ՝ 2018-ի նոյեմբերի 13-ին, Ազգային ժողովում վերահաստատեց իր մտադրությունները. «Վերին Լարսին այլընտրանք ստեղծելը մեզ համար սկզբունքային խնդիր է, բայց այդ պրոցեսում մենք բանակցային կողմ չենք... Մենք մեր վրացի եւ ռուս գործընկերների հետ անընդհատ շփումների մեջ ենք: Անընդհատ այդ խնդիրը բարձրացնում ենք, մեր կառավարության ներկայացուցիչն անընդհատ պրոցեսի մեջ է»: 25.05.2018թ. փոխվարչապետ Տիգրան Ավինյանը ֆեյսբուքյան էջում գրեց. «Սիրելի՛ հայրենակիցներ, կարող ենք արձանագրել եւս մեկ դրական տեղաշարժ տնտեսության եւ տրանսպորտի ոլորտների համար: Երեկ Ռուսաստանի Դաշնության եւ Վրաստանի ներկայացուցիչները հանդիպել են Պրահայում եւ քննարկել 2011թ.-ին կնքված «Մաքսային վարչարարության եւ ապրանքի առեւտրի մոնիթորինգի մեխանիզմի հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրի կիրառկման մանրամասներ: Համաձայնագրի՝ կյանքի կոչվելու պարագայում մենք կունենանք բեռնափոխադրման այլընտրանքային ճանապարհներ այն դեպքերում, երբ Վերին Լարսի ավտոճանապարհը փակ լինի: Համաձայնագրի իրականացման մասին ենք նաեւ զրուցել ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ մայիսի 14-ին՝ Սոչիում կայացած հանդիպման ժամանակ»: Սակայն, իրականում առ այսօր Հայաստանը Վերին Լարսին այլընտրանք չի գտել: ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, այսօր արդեն էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը օրերս հայտարարեց, որ այլընտրանքն Ադրբեջանն է. հենց կնքվի խաղաղության պայմանագիր, եւ սահմանները բացվեն, հիմնական բեռնափոխադրումները տեղի կունենան այդ երկրի տարածքով: Մինչ այդ հազարավոր ավտոմեքենաներ տասնյակ օրերով հերթ են կանգնում Լարսի անցակետի մոտ:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԿԱՆԱՅՔ

Հայաստանի ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերում կին զինծառայողների թիվը 2023 թվականին աճել է 9 տոկոսով: Այս մասին Ազգային ժողովում պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի արտահերթ նիստում կառավարության (2021-2026 թվականների ծրագրի) 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների հաշվետվության քննարկման ժամանակ՝ մարտի 25-ին, ասաց ծառայության տնօրեն Արմեն Աբազյանը:

«2022 թվականի համեմատ՝ ԱԱԾ սահմանապահ զորքերում կին զինծառայողների թիվն աճել է մոտ 9 տոկոսով, իսկ 2021 թվականի համեմատ՝ մոտ 20 տոկոսով»,- պարզաբանեց Աբազյանը:

ԽԱԲՈՒՄ Է ԺՈՂՈՎՐԴԻՆ

Նիկոլ Փաշինյանը ժողովրդին վախեցնում է Ալիեւով, պատերազմով եւ շարունակում է հանձնել. այս մասին մարտի 25-ին՝ Գեղարքունիքի մարզի Մարտունի խոշորացված համայնքում քաղաքացիների հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ, ասաց ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Իշխան Սաղաթելյանը:

«Եթե այդ պատերազմն անխուսափելի է, պետք է պատրաստվել պատերազմի, ոչ թե ժողովրդի դիմադրությունը ջարդել, ասել՝ դուք թույլ եք, զենք չունենք, բանակ չունենք, դաշնակից չունենք ու գառի պես տանել, մորթել ժողովրդին: Հերիք է պատերազմով էս ժողովրդին վախեցնի: Էս էն նույն ժողովուրդն է, որ ազատագրեց Արցախը, որ 2 հայկական պետություն ստեղծեց: Հիմա հայտնվել է մեկը, ասում է՝ չէ, դա պատահականություն էր»,-ասաց նա:

Սաղաթելյանի խոսքով՝ իրենց եւ Նիկոլ Փաշինյանի միջեւ գաղափարական տարբերությունը հետեւյալն է. «Ինքն ասում է՝ ինչ ուզում է, տանք, հետո մի կտորի վրա զարգացնենք Հայաստանը: Դա կլինի իրական Հայաստանի համար պայքար: Մենք ասում ենք՝ եթե դու զիջում ես քո ռազմավարական դիրքերը, քո ճանապարհները, կոմունիկացիաները, էդ պետությունն այս տարածաշրջանում այլեւս չի կարող գոյություն ունենալ: Ինքը խաբում է ժողովրդին:

Գյումրիում Նիկոլ Փաշինյանն արդեն բոլոր խաղաքարտերը բացեց. խոսում է շատ բաց, ասում է՝ ես եւ ՔՊ-ն ունենք մի առաքելություն՝ մենք պատմական Հայաստանից պետք է անցնենք իրական Հայաստան: Ու ասում է՝ ես պատմական Հայաստանի վարչապետը չեմ, ես ՀՀ վարչապետն եմ... Հայաստանի Հանրապետությունը, որի ղեկավարումն ինքը ստանձնել է 2018 թվականին, 42,500 քառակուսի կիլոմետրանոց հայկական 2 պետություն է եղել՝ Արցախի Հանրապետություն եւ Հայաստանի Հանրապետություն... 42,500 քառակուսի կիլոմետրի 30 տոկոսն արդեն հանձնել է թշնամուն»,-ասել է Իշխան Սաղաթելյանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՏԵՐԱԶՄՆ ԱՆՀՆԱՐ ԴԱՌՆԱ

Հայաստանի կառավարությունն ուզում է ստեղծել մի իրավիճակ, որ պատերազմը դառնա անհնար. Գյումրիում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախաձեռնող խմբի նիստի ժամանակ այս մասին ասել է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Մեր քաղաքական նպատակը հետեւյալն է՝ մեր երկրի շուրջ ստեղծել մի իրադրություն, որ պատերազմը դառնա անհնար: Սա շատ բարդ խնդիր է, չափազանց բարդ խնդիր է, եւ այստեղ բոլորիս շատ մեծ համբերություն է պետք»,- ասել է Փաշինյանը:

Վարչապետն ընդգծել է, որ իշխող քաղաքական ուժը պետք է մթնոլորտ ստեղծի, որ կուսակցական միջավայրում որեւէ մեկը չվախենա որեւէ միտք արտահայտելուց: «Սա շատ կարեւոր բան է, որովհետեւ նույնիսկ եթե ես հիմա ասում եմ շատ սխալ բան, իմ բարձրաձայնելն օգնում է, որ արդյունքում ես հասկանամ, որ իմ ասածը սխալ է, իսկ եթե ես դա չբարձրաձայնեմ, մնալու եմ այն համոզմունքի մեջ, որ ես մի ճիշտ միտք ունեմ, բայց մթնոլորտն այնպիսին չէ, որ ես այդ միտքն արտահայտեմ եւ հազարավոր հարցեր լուծեմ»,- նշել է վարչապետը:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

Հայաստանում նախորդ տարվա հունվար-սեպտեմբերին օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմել են շուրջ 360 մլն դոլար, ԵԱՏՄ երկրների կողմից օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է շուրջ 58 մլն դոլար. այս մասին մարտի 25-ին ասաց էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի հանձնաժողովում ՀՀ կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցի քննարկմանը:

«2023 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է շուրջ 278 մլն դոլար, նույն ժամանակահատվածում օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմել են շուրջ 360 մլն դոլար, որից ԵԱՏՄ երկրների կողմից օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է շուրջ 58 մլն դոլար»,- ասաց Պապոյանը:

2022 թվականին Հայաստանի Հանրապետության տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է 45.5 մլն դոլար: ԵԱՏՄ երկրների կողմից օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է շուրջ 364 մլն դոլար, գլխավորապես Ռուսաստանի Դաշնությունից են այդ ներդրումները:

Նույն ժամանակահատվածում օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմել են 417 մլն դոլար, որից ԵԱՏՄ երկրների կողմից օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ հոսքերի ծավալը կազմել է 250 մլն դոլար:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԵՐՃԱՆՔՆ ՈՒ ԹՇՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Շաբաթ օրը Նիկոլ Փաշինյանն ու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները գնացել էին Գյումրի ու այնտեղ կուսակցության նախաձեռնող խմբի նիստ անցկացրել:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ, ի թիվս այլ հարցերի, քննարկվել են նաեւ Շիրակի մարզպետ Մուշեղ Մուրադյանի պաշտոնանկության հարցը:

Մեզ հետ զրույցում շաբաթ օրը Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության քարտուղար Իզաբելլա Աբգարյանը հայտնել էր, որ «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցները Երեւանում հարձակվել են իրենց խմբակցության անդամների՝ Հայկ Գրիգորյանի եւ Ռոբերտ Ծովյանի վրա:

Նա տեղեկացրել է, որ միջադեպից հետո Հայկ Գրիգորյանը եւ Ռոբերտ Ծովյանը բերման են ենթարկվել եւ մի քանի ժամից ազատ արձակվել:

ArmLur.am-ի հետ զրույցում Երեւանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյանը պատմեց, որ միջադեպը տեղի է ունեցել Թումանյան փողոցի վրա. իրենք նկատել են, որ Երեւանի հենց կենտրոնում ծառահատում է իրականացվում, մոտեցել են, որպեսզի կասեցնեն, բայց «Կանաչապատում եւ շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի աշխատակիցների կողմից հարձակման են ենթարկվել.

«Մենք մոտեցանք ՀՈԱԿ-ի տնօրեն Արմեն Բեգոյանին, որ թղթեր ուզեն, թե ինչու են ծառահատում իրականացնում, այսինքն՝ այն ծառը, որը ենթակա է հատման, պետք է հատուկ թուղթ ունենա: Բեգոյանը միագամից շատ ագրեսիվ, փողոցային պահվածք ցուցաբերեց, չտվեց այդ փաստաթղթերը, ասաց՝ գնացեք, չեք թողում աշխատենք, հետո նրա ենթակաները սկսեցին փողոցային ոճ դրսեւորել, ինձ հետեւից հարվածեցին, Ռոբերտ Ծովյանին ավելի շատ են հարվածել, 4 հոգի էին հարձակվողները»,- պատմեց ավագանու ընդդիմադիր անդամը:

Հայկ Գրիգոյանը նշում է՝ զավեշտն այն է, որ միջադեպից հետո Արմեն Բեգոյանն է գնացել ու դիմել Ոստիկանություն, թե ավագանու ընդդիմադիր անդամները խուլիգանություն են արել. «Քննիչը մեզ հարցաքննեց, պարզեց, որ մենք կապ չունենք, ու ազատ արձակվեցինք, բայց գործը մնում է, մենք հետամուտ ենք լինելու, որ իրենք խուլիգանության համար պատժվեն»:

Հայկ Գրիգորյանը նաեւ ասաց, որ հաջորդ շաբաթ պատրաստվում է պաշտոնապես դիմել Տիգրան Ավինյանին՝ Բեգոյանին պաշտոնանկ անելու համար:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ

Երեկ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը հանդես է եկել հայտարարությամբ, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Մեկ շաբաթը լրացավ Տավուշի մարզում հնչեցրած սպառալիքներից. ի՞նչ է լինելու

Նիկոլ Փաշինյանը ուղիղ մեկ շաբաթ առաջ գնաց Տավուշ եւ, Հայաստանի քարտեզի ուրվագիծը ձեռքին, հայտարարեց. «Մենք պետք է թույլ չտանք պատերազմի սկսում: Եվ սա է պատճառը, որ որոշել ենք, որ մենք պետք է գնանք էս հատվածներում ՀՀ սահմանի ճշգրտման: Ու դա անում ենք ոչ միայն հանուն ՀՀ-ի, այլեւ կոնկրետ Ոսկեպար գյուղի համար, Կիրանց գյուղի համար, որպեսզի ապահովենք այդ գյուղերի անվտանգությունը»: Մեր երկիրը հեշտությամբ հանձնելու պատրաստակամ վարչապետի հետ հանդիպմանը մասնակցած քաղաքացիներն էլ ԶԼՄ-ներին հայտնեցին, որ Նիկոլ Փաշինյանն իրենց հետ զրույցում ասել է, թե մեկ շաբաթից պետք է կամ տարածքները հանձնենք, կամ պատերազմ է սկսվելու: Այսօր լրացավ մեկ շաբաթը, եւ վարչապետը որեւէ տեղեկություն չի հայտնում, թե ինչ է տեղի ունենալու: Ուղղակի չի կարելի մարդկանց սպառնալ պատերազմով, չի կարելի ահաբեկել քաղաքացիներին, չի կարելի քաղաքացիների մեջ հուսահատություն սերմանել, չի կարելի հանրագիտարանային մեջբերումներով հայտարարել, թե Տավուշի մարզի 4 գյուղեր հայկական չեն, Ադրբեջանի տարածքներ են, չի կարելի քաղաքացու մեջ անորոշություն սերմանել իր հայրենիքի նկատմամբ, չի կարելի վերջապես ԽԱԲԵԼ. Սյունիքում, Գեղարքունիքում, Վայոց ձորում ադրբեջանական զինուժն օկուպացրել է ՀՀ ինքնիշխան տարածքները, սակայն դրանց հեռացման պահանջի մասին մենք ոչինչ չենք լսում: Չենք լսում, որ Նիկոլ Փաշինյանը խոսի այն մասին, որ երեք մարզերում անասնապահությունը, գյուղատնտեսությունը անհնար է դարձել, որոշ դեպքերում խմելու եւ ոռոգման ջրերի խնդիրներ են առաջացել ադրբեջանական օկուպացիայի հետեւանքով, որ դպրոցներից ու մարդկանց տներից մի քանի հարյուր մետրի վրա թշնամու դիրքերն են արդեն (Շուռնուխ, Ներքին հանդ, Կութ եւ այլ բնակավայրեր): Չենք լսում, որ Նիկոլ Փաշինյանը խոսի այն մասին, թե 4 գյուղերի հանձնումից հետո, երբ ազերիների վերահսկողության տակ են անցնելու արոտավայրեր, վարելահողեր, ստրատեգիական նշանակության ջրային ռեսուրսներ, գազատարներ եւ այլն, ինչ նոր խնդիրներ են առաջանալու: Չենք լսում նաեւ, որ Նիկոլ Փաշինյանը, իր սահմանազատման պատրաստակամությանը զուգահեռ, նաեւ խոսի այդ գյուղերում բնակվող մարդկանց կյանքին սպառնացող այսօրվա վտանգների մասին: Պատերազմով մարդկանց սպառնալը երկրի առաջնորդի առաքելությունը չէ: Ստախոսությամբ իշխանություն պահելը՝ մեր երկրի տարածքների հաշվին, անթույլատրելի է:

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ ապօրինաբար հեռացված նախագահ Թագուհի Թովմասյան»:

ԼՈՒՌ ՀԵՌԱՑԱՎ

Երեկ ՀՀ նախկին վարչապետ, պետական քաղաքական գործիչ Անդրանիկ Մարգարյանի մահվան տարելիցն էր: Մեծ թվով ընկերներ, կուսակիցներ եւ բարեկամներ էին հավաքվել պանթեոնում՝ հարգանքի տուրք մատուցելու Մարգարյանի հիշատակին:

ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը եւս այցելեց Կոմիտասի անվան պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու Անդրանիկ Մարգարյանի հիշատակին:

Լրագրողների բոլոր փորձերը՝ հարցազրույց վերցնելու Սերժ Սարգսյանից, ձախողվեցին: Նա բոլոր հարցերը անպատասխան թողեց, լուռ հեռացավ:

ՇՈՐԹՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ՝ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՔՈՒԲԱՐՔՈՎ

Քննչական կոմիտեն նախօրեին հայտնեց, որ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, 324-րդ հոդվածի 1-ին մասով եւ 325-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ոստիկանությունը անվանափոխելու հարցի հետ կապված քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին դիմելու, շորթման դեպքերի մի շարք հանգամանքներ:

Իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում, մասնավորապես՝ փաստական տվյալների համաձայն՝ Երեւանի 47-ամյա բնակիչը անօրինական կերպով շինություն է կառուցել Երեւանի 43-ամյա բնակչին պատկանող հողատարածքում եւ պնդել, որ հիշյալ հողատարածքը գրանցվի իր անվամբ, ինչին վերջինս չի համաձայնել:

Նշված հարցի հետ կապված 47-ամյա տղամարդը օժանդակության խնդրանքով դիմել է քրեական ենթամշակույթ կրող հայտնի անձի: Վերջինիս, ինչպես նաեւ մի խումբ անձանց հետ նա գնացել է վերոնշյալ հողատարածք եւ կրկին պահանջել անվանափոխել հիշյալ տարածքը: Այնուհետեւ 47-ամյա տղամարդը կնոջ եղբոր՝ 50-ամյա տղամարդու հետ հիշյալ հողատարածքում հանդիպել է 43-ամյա քաղաքացու եղբորը, սպառնալիքներ հնչեցրել նրանց հասցեին, որից հետո զանգահարել են քրեական ենթամշակույթի կրող հայտնի նույն անձին, որը եւս սպառնացել է եղբայրներին:

Նախաքննության ընթացքում տվյալներ են ստացվել, որ քրեական ենթամշակույթ կրող անձը հանդիսանում է քրեական հեղինակություն եւ օգտագործելով իր քրեական հեղինակությունը՝ գործում եւ կայացնում է որոշումներ՝ պետության սահմանած վարքագծի համապարտադիր կանոններին կամ դրանց իրականացման իրավաչափ ձեւերին չհամապատասխանող, իր սահմանած եւ ճանաչած վարքագծի կանոններով:

Քրեական վարույթի շրջանակներում 43-ամյա տղամարդը ճանաչվել է տուժող, զննության են ենթարկվել վերջինիս կողմից ներկայացված տեսագրությունները:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին՝ քրեական ենթամշակույթի կրող հայտնի անձի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 1-ին մասով եւ 258-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, 47-ամյա տղամարդու նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով եւ 258-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով, իսկ վերջինիս կնոջ եղբոր նկատմամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին, որը բավարարվել է:

Հիշյալ անձինք ձերբակալվել են: Դատարանի որոշմամբ քրեական ենթամշակույթի կրող հայտնի անձի եւ 47-ամյա տղամարդու նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, իսկ վերջինիս կնոջ եղբոր նկատմամբ՝ տնային կալանքը:

Նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ԲԱՐՄԵՆԻ ՈՒ ՄԱՏՈՒՑՈՂԻ ՎԵՃԸ

ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչությունում ավարտվել է «Չերքեզի ձոր» ռեստորանի մոտ տեղի ունեցած սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Նախաքննության ընթացքում կատարված անհրաժեշտ գործողություններով հավաքված ապացույցներով պարզվել է, որ 2023թ. օգոստոսի 5-ին Գյումրի քաղաքում գտնվող «Չերքեզի ձոր» ռեստորանում նույն ռեստորանի մատուցող Ալ.Մ.-ի կողմից, որը Երեւանի բնակիչ է, բարբառով խոսելու կապակցությամբ վիճաբանություն էր ծագել վերջինիս եւ նույն ռեստորանի բարմենի՝ Ար.Մ.-ի միջեւ, որը շարունակելու նպատակով վիճաբանող կողմերը պայմանավորվել էին հանդիպել աշխատանքի ավարտից հետո:

Արդեն օգոստոսի 6-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում՝ աշխատանքի ավարտից հետո, Ալ.Մ.-ն, իր հետ վերցնելով դանակ, դուրս էր եկել աշխատավայրից եւ ռեստորանից քիչ հեռու՝ Գյումրի քաղաքի Բուլվարային փողոցում, հանդիպել Ար.Մ-ի, վերջինի եղբոր եւ երկու ընկերների հետ: Ռեստորանում ծագած վիճաբանությունը շարունակվել էր, ինչին միջամտել էին Ար.Մ.-ի եղբայրը եւ ընկերներից մեկը՝ Ա.Ս.-ն:

Վիճաբանության ընթացքում Ալ.Մ.-ն, նախապես իր հետ վերցրած դանակով հարվածել է Ար.Մ.-ի ձեռքին՝ պատճառելով մարմնական վնասվածք, ինչից անմիջապես հետո, Ա.Ս.-ին կյանքից զրկելու դիտավորությամբ, նույն դանակով հարվածել էր նաեւ վերջինիս կրծքավանդակի ձախ կեսի առաջային մակերեսին եւ դեպքի վայրից դիմել փախուստի:

Դեպքից հետո Ա.Ս.-ի ընկերները նրան տեղափոխել էին հիվանդանոց, սակայն երիտասարդի կյանքը փրկել չէր հաջողվել:

Նախաքննության ընթացքում վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքներ պարզելու նպատակով նշանակվել են մի շարք փորձաքննություններ, այդ թվում՝ դիակի դատաբժշկական:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ Ալ.Մ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով եւ 155-րդ հոդվածի 1-ին մասով: Նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է,եւ վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԿԱՍԿԱԾՅԱԼՆԵՐ

ԿՐԱԿՈՑՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ



Ֆուչիկի փողոցի թիվ 6 հասցեում հնչած աղմկահարույց կրակոցներից անցել է 8 օր, ու մինչ օրս իրավապահները կրակոցներ արձակողներին եւ միջադեպի մասնակիցներին չեն գտել: Վարչական շրջանում տարածված տեղեկությունների համաձայն՝ միջադեպի մասնակիցները կապ ունեն քրեական հեղինակություն համարվող Արտյոմ Կանեւսկոյի՝ Արտյոմ Հարությունյանի մտերիմ շրջապատի հետ: Իրավապահ համակարգը վերջինիս շրջապատի՝ կապ ունենալու մասով դեռեւս որեւէ տեղեկություն չունի:

Ֆուչիկի փողոցի թիվ 6 հասցեի կրակոցներից ArmLur.am-ին մանրամասներ էին հայտնի դարձել: Մասնավորապես՝ կրակոցները հնչել են երեխայի շուրջ առաջացած տարաձայնությունից: Վիճաբանողներից մեկի երեխային, որ առողջական խնդիրներ ունի, ծաղրել են, ու դեպքին խառնվել են ծնողները, արդյունքում հնչել են կրակոցներ:

Shamshyan.com-ը գրել էր, որ մարտի 14-ին մարտաֆիլմ հիշեցնող կրակոցներ են հնչել Երեւանում: Ժամը 00:20-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մաշտոցի բաժին ահազանգ է ստացվել 1-03 շտապօգնության կայանից. հայտնել են, որ բժիշկների հերթապահ խումբը կանչով մեկնել է Ֆուչիկի փողոցի թիվ 6 հասցե, որտեղ հայտնաբերել են վիրավոր քաղաքացիների ու արնանման հետքեր:

Վիրավորներին առաջինը օգնության են հասել բժիշկները, պարեկներն ու քաղաքացիները:

Ոստիկաներն ու պարեկները դեպքի վայրում հայտնաբերել են տարբեր տեսակի հրազեներից արձակված մեծ թվով կրակված պարկուճներ, պայթեցված նռնակի դետալներ, արնանման հետքեր, կրակոցից վնասված ավտոմեքենաներ:

Պարզվել է, որ դեպքի վայրից Երեւանի տարբեր հիվանդանոցներ են տեղափոխվել երկու քաղաքացի:

Հիվանդանոցում բժիշկները ոստիկաններին եւ քննիչներին հայտնել են, որ վիրավորներն ի վիճակի չեն կատարվածի մասին բացատրություն տալու, քանի որ գտնվում են վիրահատարանում:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ ոստիկաններն ու քննիչները տաք հետքերով պարզել են դեպքի որոշ հանգամանքներ, եւ կան ենթադրյալ կասկածյալներ, որոնք որոնվում են:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 22-ից մարտի 25-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 207 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԹՇՆԱՄՈՒ ԶԻՆՈՒԺԻ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ

Տավուշի մարզի սահմանագոտում տեղի են ունենում ադրբեջանական զինուժի եւ զինտեխնիկայի, այդ թվում՝ ծանր տեխնիկայի կուտակումներ: Առաջիկա օրերին սահմանի այդ հատվածում Ադրբեջանի զինուժի կողմից հարձակումը քիչ հավանական է թվում շարունակվող անձրեւների պատճառով, քանզի ցեխոտ, դժվարանցանելի տեղանքները դժվարություններ են ադրբեջանական տեխնիկայի տեղաշարժի համար: Մարտի 5-ին տեղեկատվական հարցում ենք ուղարկել պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանին՝նրան հարցնելով՝

1. Տավուշի մարզի Ոսկեպար եւ Այգեպար գյուղերի սահմանամերձ տարածքներում Ռուսաստանի զինուժի կողմից կառուցված, հավաքովի կոնստուկցիաներով շենքերը ինչ նպատակով են կառուցվել, ներկայումս դրանք որպես ինչ են ծառայում:
2. Տավուշի մարզի սահմանագոտում, անկլավ հանդիսացող կամ այդպիսին չհանդիսացող, նախկինում ադրբեջանաբնակ գյուղերի հարակից տարածքներում ՊՆ-ն հողաշինական ինչ աշխատանքներ է կատարում, ինչ նպատակով:

Պաշտպանության նախարարությունից մարտի 21-ին գրավոր պատասխանել են, որ ռուսական զորանոցների վերաբերյալ հարցը ՀՀ պաշտպանության նախարարության գործառույթների շրջանակներից դուրս է: ՊՆ-ն պարտավոր էր հայտնել, թե որն է այդ տեղեկատվությանը տիրապետող պետական հիմնարկությունը: Սահմանագոտում հողաշինական աշխատանքների վերաբերյալ հարցին ՊՆ-ն պատասխանել է, որ այդ հարցով «Տեղեկատվության տրամադրումը մերժվում է՝ հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին եւ ՀՀ կառավարության 11.01.2024թ. N953 որոշմամբ հաստատված ցանկի 3-րդ, 12-րդ եւ 21-րդ կետերի պահանջները»:

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ ՕԳՆԵԼ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել՝ հարցնելով, թե ովքեր, որ կազմակերպություններն են օգնել Տավուշում հաստատված արցախցիներին: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Փաշինյանի որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը խուսափել է Արցախ բառն օգտագործել: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված, Տավուշի մարզում հաստատված բնակիչներին դրամական օգնություն տրամադրում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին հիգիենիկ, պարենային, ոչ պարենային ապրանքներ, կենցաղային տեխնիկա տրամադրվել են Ռումինիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի, Լիտվայի, Ավստրիայի, Արգենտինայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Բուլղարիայի, Թուրքիայի հայ գործարարների, Հունաստանի, ԱՄՆ-ի, Ավստրիայի հայ համայնքի, Բոքսի Ֆեդերացիայի, ՌԴ գործարարների, UNHCR-ի, ՀԲՄԸ-ի, ՄԱԿ-ի պարենային համաշխարհային կազմակերպության, անհատ բարերարների եւ տարբեր ՀԿ-ների կողմից»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՏԱՎՈՒՇ

Ի՞ՆՉ ԿՈԹՈՂՆԵՐՈՎ Է ՀԱՐՈՒՍՏ ԿԻՐԱՆՑ ԳՅՈՒՂԸ

Վերջերս Նիկոլ Փաշինյանը նշեց, որ Երեւանը պատրաստ է գնալ հատվածական դելիմիտացիայի՝ չբացառելով գործընթացը սկսել Տավուշի մարզից: Նա նաեւ պարբերաբար ցույց է տալիս Հայաստանի Հանրապետության բարեզը՝ 29.800 քառ. կմ-ով,եւ մի փոքրիկ հատված, որը Ադրբեջանում գտնվող հայկական Արծվաշեն գյուղն է: Սակայն առանց հիշատակելու Արծվաշենի մասին՝ Փաշինյանը նշեց, որ եթե Ադրբեջանը պահանջում է Հայաստանում գտնվող «անկլավ»-ները, ապա հայկական կողմն էլ պահանջելու է Արծվաշենը: Փաշինյանն այս նույն դիրքորոշումն է հայտնել Տավուշ կատարած այցի ժամանակ:



Հանդիպումից ունեցած բուռն քննարկումներից հետո տավուշեցիները հայտարարել են, որ դիմելու են ինքնապաշտպանության՝ թույլ չտալու, որ հանձնվեն իրենց հայրենի գյուղերը: ArmLur.am-ը ուսումնասիրել է Տավուշի շրջանի 4 գյուղերում (Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեւան, Կիրանց) գտնվող պատմամշակութային կոթողները եւ այդ կոթողների ունեցած պատմական ու մշակութային արժեքները: Նշված 4 գյուղերը կորցնելով՝ Հայաստանը, հայկական տուրիզմը կկորցնի նաեւ մի շարք կոթողներ ու տեսարժան վայրեր: Կիրանց գյուղում գտնվող եկեղեցիներն ու պատմամշակութային կոթողները թվագրվում են դեեւս 2-1 հազարամյակներով: Գյուղատեղի Հին Կունեն մեզ է հասել 13-19-րդ դարերից, գտնվում է գյուղի արեւելյան եզրին՝ Կիրանց գետի երկու ափին: Գյուղատեղի հյուսիս-արեւմտյան մասում գտնվում է գերեզմանոց, որը թվագրվում է 13-17-րդ դարերով: Գյուղատեղի հարավային մասում եւս կա գերեզմանոց, որը թվագրվում է 13-19-րդ դարերով: 1676 թվականի Շամբեցի Հայրապետի տապանաքարը եւ մի քանի խաչքարեր պահպանված են 17-րդ դարից: Գյուղատեղիի հյուսիսային մասում՝ Կիրանց գետի ձախ ափին, գտնվել է 17-րդ դարի եկեղեցի (անունը հայտնի չէ), որից պահպանվել է միայն խորանը: Կիրանց վանական համալիրը կառուցվել է 13-րդ դարում եւ գտնվում է գյուղից 12 կմ դեպի աեւմուտք՝ Կիրանց գետի ձախ ափին: Այն բաղկացած է երեք եկեղեցուց, գավիթ-սրահներից, սեղանատնից, բնակելի եւ օժանդակ շինություններից: Վանքը պարսպապատ է: Սեղանատան արեւմտյան կողմում գտնվում են վանքապատկան մի քանի թաղակապ սենյակներ: Պահպանվել են նաեւ միաբանության խցերի մնացորդներ, գերեզմանատունը, կամարակապ մեծ դարպասով վանքի պարիսպը: Գյուղում են գտնվում միջնադարից պահպանված մի քանի կամուրջներ: Կիրանցում է գտնվում նաեւ Շոռ աղբյուրի ձորում կառուցված կամուրջը: Գյուղից 2 կմ հյուսիս-արեւելք է գտնվում 11-13-րդ դարերով թվագրվող Խաչի յալ մատուռը ու էլի մի քանի եկեղեցիներ ու մատուռներ, որոնց անունները հայտնի չեն, սակայն պահպանված որոշ արձանագրություններից տեղեկանում ենք, որ կառուցվել են 12-14-րդ դարերում: 13-րդ դարում պահպանված եկեղեցիներից մեկն (անունն անհայտ է) ունեցել է սեղանատուն, որը հարուստ է եղել որմնանկարներով: Եկեղեցու սեղանատունը պահպանված է: Եկեղեցիներն իրենց տարածքում ունեն գերեզմանոցներ (13-րդ դար), եւ պահպանվել է նաեւ Մամիա վարդապետի տապանաքարը՝1698 թվականից: Կիրանց գյուղն ունի նաեւ ջրանցք, որը սկիզբ է առնում Սրանոցի կամրջի մոտից, անցնում Կիրանց եւ Աճարկուտ գյուղերով: Ջրանցքն այսօր էլ գործող է: 1964 թվականին գյուղի կենտրոնում կանգնեցվել է հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին, եւ 1996 թվականին կառուցվել է Արցախյան առաջին պատերազմի զոհվածների հիշատակն անմահացնող հուշարձան: Գյուղից 3 կմ դեպի արեւմուտք՝ Կիրանց գետի ձախ ափին՝ «Ծլհան» բացատում, պահպանվել է Ք.ա. 2-1 հազարամյակներով թվագրվող Դամբարանադաշտ:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՌԴ

ԼԱՐՍԻ ԱՆՑԱԿԵՏԸ ՓԱԿ Է

Մեր երկիր արտահանումը եւ ներմուծումը գրեթե կիսով չափ հենց Ռուսաստանից է, եւ բնական է, որ այդտեղ ցանկացած դժվարություն էական հետեւանքներ է թողնելու մեր տնտեսության վրա:

Օրեր առաջ Ռուսաստանի իշխանությունները հայտնեցին Վրաստանի հետ սահմանին գտնվող «Վերի Լարս» անցակետի փակման մասին: Հյուսիսային Օսիայի կառավարությունը հաղորդում էր տարածել, ըստ որի՝ միջպետական ճանապարհին եւ հարակից կայանատեղիներում դեպի Վրաստան անցմանը սպասում էր շուրջ 500 բեռնատար, ինչպես նաեւ տեղական իշխանությունները հայտնեցին, որ Լարսի անցակետի էլեկտրոնային հերթագրման համակարգում սահմանի հատման 1500 եւ ավելի հայտ է լրացվել: ArmLur.am-ը կապ հաստատեց ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի անդամ, տնտեսագետ Թադեւոս Ավետիսյանի հետ՝ հասկանալու համար՝ ինչն է անցակետի փակ լինելու պատճառը, եւ տնտեսապես ինչ հետեւանքներ կարող է թողնել Հայաստանի վրա. «Վերջին շրջանում ճանապարհի փակ լինելու հիմնական պատճառը եղանակային անբարենպաստ պայմաններն են, բայց նաեւ ակնհայտ է այն անորոշությունը եւ ռիսկը, որը բխում է աշխարհաքաղաքական իրավիճակից՝ հայ-ռուսական հարաբերություններից: Դժվար է ասել՝ որքան ժամանակ կտեւի սա, եղանակային պայմանները գնալով ավելի տաքանում են, եւ եղանակային պայմանների բացասական գոտուց կվերանան, բայց մյուս գործոնը, որի մասին խոսում ենք, շատ անորոշ է, եւ դա ավտոմատ դժվար է կանխատեսել, որովհետեւ դա կապված է հայ-ռուսական հարաբերությունների հետ եւ հետագա հնարավոր խնդիրների»: Տնտեսագետի խոսքով՝ դա կազդի մեր տնտեսության վրա. «Դե, իհարկե, եթե մեր երկիր արտահանումը եւ ներմուծումը գրեթե կիսով չափ հենց Ռուսաստանից է, բնական է, որ այդտեղ ցանկացած դժվարություն էական հետեւանքներ է թողելու մեր տնտեսության վրա»:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 28 պատահար. 4 մարդ զոհվել է, 40-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՄԻՊ

ԸՆԴՈՒՆԵԼ Է ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը մարտի 25-ին ընդունել է Ֆրանսիայի Ազգային ժողովի Ֆրանսիա-Հայաստան բարեկամական խմբի նախագահ Անն-Լորանս Պետելի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպմանը մասնակցել է նաեւ Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվյե Դեկոտինը:

Ինչպես տեղեկանում ենք Հայաստանի Հանրապետության ՄԻՊ-ի տարածած հաղորդագրությունից, ողջունելով հյուրերին՝ Պաշտպանը բարձր է գնահատել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Ֆրանսիացի գործընկերների հետ համագործակցությունը՝նկատի ունենալով նաեւ այն ժողովրդավարական ու իրավունքահեն արժեքները, որոնցով առաջնորդվում է Ֆրանսիան:

Անահիտ Մանասյանը ներկայացրել է Պաշտպանի գործունեության ուղղությունները՝ մասնավորապես ընդգծելով կանանց, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, հավաքների ազատության իրավունքի, քաղաքացիական եւ սոցիալ-տնտեսական իրավունքների, զինված ուժերում, քրեական վարույթի շրջանակում անձանց իրավունքների պաշտպանության, ատելության խոսքի, անհանդուրժողականության մթնոլորտի, խտրականության դեմ պայքարի շրջանակներում եւ մի շարք այլ ոլորտներում իրականացվող աշխատանքները:

Հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, Պաշտպանն անդրադարձել է ընտանեկան, գենդերային հիմքով բռնության կանխարգելմանը եւ Ստամբուլյան կոնվենցիան վավերացնելու անհրաժեշտությանը, կանանց իրավունքների պաշտպանության եւ խթանման ուղղությամբ աշխատանքների կարեւորությանը:

Անահիտ Մանասյանը ներկայացրել է նաեւ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցեր, հատուկ անդրադարձել է անձամբ իր եւ աշխատակազմի կողմից իրականացված փաստահավաք աշխատանքներին:

Հանդիպման շրջանակներում քննարկվել են Հայաստանի Հանրապետության սահմանային անվտանգությամբ պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին առնչվող հարցեր:

Անն-Լորանս Պետելն իր հերթին շնորհակալություն է հայտնել ընդունելության եւ արդյունավետ քննարկման համար՝ կարեւորելով Պաշտպանի հաստատության գործունեությունը մարդու իրավունքների պաշտպանության պատշաճ համակարգի ամրապնդման հարցում:

ՉԱՎԱՐՏՎԱԾ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾ

ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ՝ ԽԱԽՏՈՒՄՆԵՐՈՎ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ սույն թվականի փետրվարի 13-ին Բրյուսովի անվան պետական համալսարանի հոգաբարձուների խորհուրդը հայտարարել է բաց մրցույթ՝ համալսարանի ռեկտորի պաշտոնի համար: Մրցույթին մասնակցելու համար դիմել է ընդամենը մեկ անձ, որը, իհարկե, Դավիթ Գյուրջինյանն է, որն արդեն մեկ տարի իրականացնում է ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններ:

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է, որ այս մրցույթի հայտարարությունը տարակուսանք է առաջացնում, քանի որ «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատության ռեկտորն ընտրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ բարձրագույն ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով ուսումնական հաստատության խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ռեկտորի պաշտոնում: Ռեկտորի ընտրության արդյունքները հաստատում է հիմնադիրը: Արդյունքներն անվավեր ճանաչելու դեպքում, համաձայն գործող կարգի, նշանակվում է ռեկտորի նոր ընտրություն:

Մինչդեռ, 2022 թվականի դեկտեմբերի 9-ի Բրյուսովի անվան պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի նիստում փակ եւ գաղտնի քվեարկության արդյունքներով ռեկտորի պաշտոնում ձայների մեծամասնությամբ (12/8 ձայների համամասնությամբ) ընտրվել էր Կարինե Հարությունյանը: Սակայն, մրցույթում պարտված նույն Դավիթ Գյուրջինյանը դատական կարգով բողոքարկել էր մրցույթի արդյունքները՝ պահանջելով դրանք անվավեր ճանաչել: Արդյունքում մրցույթի արդյունքները՝ Կարինե Հարությունյանի ռեկտորի պաշտոնում ընտրվելու մասին, չհաստատվեցին կառավարության կողմից: Ավելին՝ Կարինե Հարությունյանը եւս դիմել էր դատարան՝ մրցույթը կայացած համարելու եւ կառավարությանը դրանց արդյունքները հաստատել պարտավորեցնելու պահանջներով: Դատական գործերը դեռեւս ընթանում են, եւ դատարանը որեւէ որոշում չի կայացրել: Հարց է առաջանում՝ ինչպե՞ս է համալսարանի հոգաբարձուների խորհուրդը հայտարարել բաց մրցույթ, երբ դատական քննությունը ավարտված չէ, եւ նախորդի արդյունքները անվավեր ճանաչված չեն: Սա «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի ակնհայտ խախտում է:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախատեսվում է մարտի 29-ին անցկացնել Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի ընտրությունները: Այս իրավիճակի ստեղծման պատճառը եւ ջատագովը ՀՀ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանն է, քանի որ նա հանդիսանում է Գյուրջինյանի հովանավորը եւ «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ:

Ստացվում է, որ իշխանությունները, նախկիններին օրինախախտությունների համար մեղադրելով, այսօր իրենք օրինախախտ նախագծով փորձում են դեռ չավարտված դատական գործի առկայությամբ ռեկտորի նոր ընտրություններ անել:

ArmLur.am-ը փորձեց կապվել Դավիթ Գյուրջինյանի հետ, սակայն, ինչպես միշտ, Գյուրջինյանը մեր զանգերը թողեց անպատասխան:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԿԳՄՍՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՄԲ

«ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՐ»՝ ՀՀ-ՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության համակարգմամբ՝ Հայաստանում ավել քան 20 տարի անցկացվում է «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագիրը:

Այս ծրագրի շրջանակում իրականացվում է նաեւ «Եվրոպական ժառանգության օրերի պատմություններ» դրամաշնորհային մրցույթը, որին կարող են մասնակցել «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրին միացած մշակութային կազմակերպությունները:

ԿԳՄՍ նախարարությունից հայտնում են, որ Եվրոպայի խորհրդի կողմից 2023 թվականին հայտարարված «Եվրոպական ժառանգության պատմություններ» դրամաշնորհային ծրագրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ենթակայության Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը ներկայացել էր «Հեքիաթի դեսպաններ» խորագիրը կրող հեղինակային նախագծով, որն արժանացել է մրցանակի: Այժմ արդեն գրադարանը «Եվրոպական ժառանգության օրերի պատմություններ» ծրագրի շրջանակում մարզերի երեխաների համար կիրականացնի «Եվրոպական ժառանգության ճամբար», որի շրջանակում Լոռիում եւ Տավուշում կստեղծվեն նոր գրքերի ընթերցանության անկյուններ:

Ընթերցանության անկյունների պաշտոնական բացման արարողությունները տեղի կունենան մարտի 27-ին Սպիտակի քաղաքային գրադարանում եւ մարտի 29-ին՝Աչաջուրի մշակույթի տանը:

Ծրագրի շրջանակում Սպիտակի քաղաքային գրադարանում եւ Աչաջուրի մշակույթի տանը կիրականացվի «Հեքիաթի դեսպաններ» ծրագիրը: Կկազմակերպվեն տարբեր երկրների մշակութային ժառանգության եւ դրանց պահպանության կարեւորության վերաբերյալ վարպետության դասեր, եվրոպական մանկապատանեկան գրքերի ընթերցումներ եւ քննարկումներ: Ապրիլ-մայիս ամիսներին Սպիտակի եւ Աչաջուրի գրադարանների ընթերցող-երեխաները կմասնակցեն նկարազարդման վարպետության դասընթացի եւ կկատարեն թեմատիկ նկարազարդումներ:

Ծրագրի ամփոփումն ու փակման արարողությունը տեղի կունենա 2024 թվականի մայիսի 15-ին Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում: Փակման արարողության շրջանակում կցուցադրվեն ծրագրին մասնակից երեխաների նկարազարդումները, ԵՄ դեսպանների մասնակցությամբ տեղի կունենա հեքիաթապատումների շարք: Մասնակից երեխաները Երեւանում կայցելեն նաեւ մշակութային հաստատություններ, կշրջեն պատմամշակութային վայրերով:

Եվրոպայի խորհրդի կողմից հայտարարված «Եվրոպական ժառանգության պատմություններ» դրամաշնորհային ծրագրին ներկայացված 120 հայտերից մրցութային փուլը հաղթահարել եւ լավագույնների ցանկում են ընդգրկվել Հայաստանի, Իտալիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Ուկրաինայի, Գերմանիայի, Լիտվայի, Անգլիայի ներկայացրած նախագծերը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԵՐԳԵՐ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՅԻՆ

Ամենայն հայոց բանաստեղծը հայտնի է ոչ միայն իր բանաստեղծություններով, արձակով, այդ թվում՝ հեքիաթներով, այլ նաեւ իր մեծ մարդասիրությամբ եւ նվիրվածությամբ հայրենիքին:



Հովհաննես Թումանյանն իր հասարակական գործունեությամբ հայտնի է դարձել 20-րդ դարի սկզբին: Հենց այս ժամանակ էլ հաշտարարի դեր է կատարել հայ-թաթարական կռիվների ընթացքում եւ երկու անգամ ձերբակալվել: Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, երբ թուրքերը, առիթից օգտվելով, կազմակերպեցին Հայոց ցեղասպանությունը, Թումանյանը երկու անգամ անցել է Արեւմտյան Հայաստան եւ հասել մինչեւ Վան: Արդեն էջմիածնում հսկայածավալ աշխատանք է տարել՝ օգնելով հայ գաղթականներին, հատկապես՝ որբ մանուկներին: Հենց այս ընթացքում է ծնվել Թումանյանի՝ հայրենիքին նվիրված բանաստեղծությունների մեծ մասը, որոնցից որոշները ապագայում երգերի են վերածվել:

«Հայրենիքիս հետ». 1915

Վաղուց թեեւ իմ հայացքը Անհայտին է ու հեռվում,
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ,
Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Եվ գյուղերից, եւ՛ շեներից՝ տխո՛ւր, դատարկ ու խավար,
Ջարկվա՛ծ հայրենիք,
Ջրկվա՛ծ հայրենիք:

Խռնվում են մտքիս հանդեպ բանակները անհամար,
Տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակների աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խնջույքներով արյունի,
Որ դարձրին քեզ մշտական սեւ ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժպիտ,
Ողբի՛ հայրենիք,
Որբի՛ հայրենիք:
Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՛ւն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սրտի խորքից խոսք ես խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ պիտ ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձրգտում է մեր հոգին,
Հույսի՛ հայրենիք,
Լույսի՛ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՛ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՛ր հայրենիք,
Հզո՛ր հայրենիք...

«Հոգեհանգիստ». 1915

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը հին
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զոհերին,
Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչեւ ծով
Մարած են, մեռած, փըռված ու ցըրված հազար հազարով...
Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,
Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից
Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նեմրութ, Թանդուրեք,
Հայոց աշխարհքի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր աեւ
Անհաս, աննըվազ, միշտ վառ ու պայծառ, իմ գըլխի վերեւ...
Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նըման,
Կանչեցի թըշվառ էն հոգիներին՝ ցըրված հավիտյան
Մինչեւ Միջագետք, մինչեւ Ասորիք, մինչեւ Ծովն հայոց,
Մինչեւ Հելլեսպոնտ, մինչեւ Պոնտոսի ափերն ալեկոծ:
Հանգե՛ք, իմ որբե՛ր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր եւ անշահ...
Մարդակեր գազան մարդը դեռ երկար էսպես կըմնա...

Աջիցըս Եփրատ, ձախիցըս Տիգրիս՝ ահեղ ձեներով,
Սաղմոս կարդալով՝ անցան, գընացին խոր-խոր ձորերով,
Ամպերն էլ ելան Ձիրավի ձորից, հըսկա բուրվառից,
Ճանապարհ ընկան ծաղկանց սարերից, Հայկական պարից,
Բույլ-բույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը հեռու,
Գոհար ցողելու, ծաղկունք բուրելու, բուրմունք խընկելու
Մինչեւ Միջագետք, մինչեւ Ասորիք, մինչեւ Ծովն հայոց,
Մինչեւ Հելլեսպոնտ, մինչեւ Պոնտոսի ափերն ալեկոծ...
Հանգե՛ք, իմ որբեր... իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր եւ անշահ...
Մարդակեր գազան մարդը դեռ երկար էսպես կըմնա...

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Ավարտվել է Հայաստանի բասկետբոլի կանոնավոր առաջնության (մրցաշարին մասնակցում են միայն հայ բասկետբոլիստները) 2023/2024 մրցաշրջանը: Եզրափակչում ԲԿՄԱ-ն 112-91 հաշվով առավելության է հասել «Ֆոքսիս»-ի նկատմամբ եւ դարձել է Հայաստանի չեմպիոն: Հանդիպման ամենաարդյունավետ բասկետբոլիստը Ալբերտ Թադեւոսյանն էր (ԲԿՄԱ): Նա վաստակել է 36 միավոր, 5 անգամ տիրել է օղակից անդրադարձող գնդակին եւ կատարել է 8 արդյունավետ փոխանցում: Առաջնության բրոնզե մեդալներին արժանացել է «Էրեբունի»-ն, որը երրորդ տեղի համար խաղում 119-88 հաշվով հաղթել է «Ուրարտու»-ին: Հայտնի են դարձել նաեւ առաջնության լավագույնները՝
Լավագույն խաղարկող՝ Տիգրան Մկրտումյան (ԲԿՄԱ),
Լավագույն պաշտպան՝ Դանիել Գեւորգյան («Ուրարտու»),
Լավագույն թեթեւ հարձակվող՝ Արտյոմ Թավակալյան («Ֆոքսիս»),
Լավագույն ծանր հարձակվող՝ Հայկազ Գրիգորյան («Ֆոքսիս»),
Լավագույն կենտրոնական՝ Յուրա Մելիքյան (ԲԿՄԱ),
Լավագույն մարզիչ՝ Վարդան Խաչատրյան (ԲԿՄԱ),
Առաջնության ամենաարժեքավոր խաղացող (MVP) է ճանաչվել Ալբերտ Թադեւոսյանը (ԲԿՄԱ):

ՄԵԿՆԵԼ ԵՆ ՉԵԽԻԱ

Հայաստանի ֆուտբոլի ազգային ընտրանին մեկնել է Չեխիա: Այս մասին գրում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան՝ նշելով, որ ազգային հավաքականը մարտի 26-ին Պրահայում ընկերական հանդիպում կանցկացնի Չեխիայի ընտրանու հետ: Թիմի հետ Չեխիա չեն մեկնել Էդգար Փիլոյանը, որը միացել է Հայաստանի Մ-21 հավաքականին, եւ Էդգար Գրիգորյանը՝ վիզայի հետ կապված խնդրի պատճառով: Հայաստանի Մ-21 հավաքականից ազգային թիմին է միացել կիսապաշտպան Տիգրան Ավանեսյանը: Հայաստանի ազգային հավաքականը Չեխիա է մեկնել հետեւյալ կազմով.

Դարպասապահներ
Օգնյեն Չանչարեւիչ-«Նոա»
Արսեն Բեգլարյան-«Արարատ-Արմենիա»
Ստանիսլավ Բուչնեւ-«Փյունիկ»
Պաշտպաններ
Վարազդատ Հարոյան-«Ցինդաո Ուեստ Քոսթ» (Չինաստան)
Անդրե Կալիսիր-«Բրոմապոյկարնա» (Շվեդիա)
Գեորգի Հարությունյան-«Կրասնոդար» (Ռուսաստան)
Ստյոպա Մկրտչյան-«Օսիեկ» (Խորվաթիա)
Կամո Հովհաննիսյան -«Արարատ-Արմենիա»
Սերգեյ Մուրադյան -«Նոա»
Ժիրայր Մարգարյան -«Ուրարտու»
Էրիկ Փիլոյան -«Ուրարտու»
Կիսապաշտպաններ/Հարձակվողներ
Էդուարդ Սպերցյան -«Կրասնոդար» (Ռուսաստան)
Էդգար Սեւիկյան -«Ֆերենցվարոշ» (Հունգարիա)
Վահան Բիչախչյան -«Պոգոն» (Լեհաստան)
Նարեկ Գրիգորյան -«Ֆարուլ» (Ռումինիա)
Հովհաննես Հարությունյան -«Փյունիկ»
Դավիդ Դավիդյան -«Փյունիկ»
Արթուր Սերոբյան -«Արարատ-Արմենիա»
Տիգրան Ավանեսյան -«Բալթիկա» (Ռուսաստան)
Արթուր Միրանյան -«Նոա»
Հրանտ-Լեոն Ռանոս -«Բորուսիա» (Մյոնխենգլադբախ, Գերմանիա)
Նորբերտո Բրիասկո Բալեկյան -«Բոկա Խունիորս» (Արգենտինա)
Լուկաս Սելարայան -«Ալ-Ֆաթեհ» (Սաուդյան Արաբիա):

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈԹՈՂՆԵՐ

ՏԱՎՈՒՇԻ ՉՈՐՍ ԳՅՈՒՂԵՐԸ

ArmLur.am-ը ուսումնասիրել է Տավուշի շրջանի 4 գյուղերում (Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեւան, Կիրանց) գտնվող պատմամշակութային կոթողները եւ այդ կոթողների ունեցած պատմական ու մշակութային արժեքները: Նշված 4 գյուղերը կորցնելով՝ Հայաստանը, հայկական տուրիզմը կկորցնի նաեւ մի շարք կոթողներ ու տեսարժան վայրեր:

Հայ- ադրբեջանական սահմանից ընդամենը 1.5 կմ հեռավորությունում գտնվող Ոսկեւան գյուղում գործում է Սուրբ Գայանե եկեղեցին, որը կառուցվել է 1803 թվականին: Եկեղեցու նախնական տեսքը փայտյա է եղել, այնուհետեւ՝ 100 տարի անց՝ 1903 թվականին, եկեղեցին քարե շինության տեսք ստացավ: Կրկին 100 տարի անց՝ 2003 թվականին, եկեղեցին վերակառուցվեց:

Ոսկեւան գյուղից 4 կմ արեւմուտքում է գտնվում Շեկ աղբյուրը, 3 կմ հյուսիս՝ Ոսկեւանից 3 կմ արեւելք՝ Խլեզձոր, եւ 5 կմ հյուսիս՝ Սռի գյուղատեղիները:

Գյուղի հին գերեզմանոցի հարավային մասում կանգուն է բռնչենի ծառը, որի տարիքը հայտնի չէ: Միայն ենթադրվում է որ ծառը գյուղի հասակակիցն է: Ծառի առջեւի մասում, Զորավար Անդրանիկի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ, 1990 թվականին կառուցվել է նրա կիսանդրին:

Կիսանդրին քանդակել է հարեւան Ոսկեպար գյուղի բնակիչ Հրաչիկ Եգորի Ալավերդյանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

●Մարտի 30-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Սիդը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարելի է որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ ստանալ:

Աստղիկ Կիրակոսյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ որդեգրման ենթակա երեխաների մասին տեղեկություններ ստանալու նպատակով հաշվառված, որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիները դիմում են իրենց բնակության վայրի մարզպետարանի աշխատակազմ կամ նախարարություն, իսկ հաշվառված, որդեգրել ցանկացող ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիները եւ օտարերկրացիները՝կենտրոնական մարմին: Հաշվառված, որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացին, ՀՀ սահմաններից դուրս բնակվող ՀՀ քաղաքացին եւ օտարերկրացին կարող են ծանոթանալ երեխաների անձնական գործերին նախընտրելի չափանիշներով երեխա ընտրելու համար: Տրամադրված տեղեկությունների հիման վրա որդեգրման ենթակա երեխային որդեգրելուց հրաժարվելու դեպքում որդեգրել ցանկացող անձը հաշվառումից չի հանվում:

Այն դեպքերում, երբ երեխային որդեգրելու ցանկություն է հայտնել ՀՀ սահմաններից դուրս բնակվող երեխայի խորթ հայրը, խորթ մայրը, նրա ազգականները, կամ երբ երեխայի ծնողների եւ որդեգրել ցանկացող անձի միջեւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով առկա է գրավոր համաձայնություն, որդեգրման նպատակով երեխայի կենտրոնացված հաշվառումից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը կենտրոնական մարմին է ուղարկում տվյալ երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակը: Այդ դեպքերում որդեգրման ենթակա երեխայի տվյալներն այլ անձանց չեն տրամադրվում:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Որդեգրել ցանկացող անձի կողմից տվյալ երեխայի որդեգրումից հրաժարվելու դեպքում երեխան հանվում է հաշվառումից:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. ՀՀ մշտական բնակության ժամանող անձի անձնական ավտոմեքենան առանց մաքսատուրքի վճարման ՀՀ ներմուծելու համար ավտոմեքենայի համար ի՞նչ պահանջներ են սահմանվում:

Գեւորգ Հունանյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է նախքան Հայաստանի Հանրապետություն ներմուծվելը՝ վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ, առնվազն 6 ամիս հաշվառված լինի Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան Հայաստանի Հանրապետությունում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ապրանքների մաքսային հայտարարագրումն իրականացվում է հայտարարատուի կամ նրա լիազորած անձի կամ նրա հանձնարարությամբ եւ անունից հանդես եկող մաքսային ներկայացուցչի կողմից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝համացանցից

Շրջանառության մեջ են դրվել «Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակ» եւ «Պարույր Սեւակի ծննդյան 100-ամյակ» ոսկե հուշադրամները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011
Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ________

Ազգանուն՝ ________

Առաքման հասցե՝ ________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 1	+ 3 + 6
Կոտայքի լեռներ	0 - 2	+ 2 + 5
Կոտայքի նախալեռներ	+ 4 + 6	+ 8 + 10
Գեղարքունիք	0 - 3	+ 2 + 5
Լոռի	- 2 + 2	+ 5 + 9
Տավուշ	+ 3 + 6	+ 7 + 10
Արագածոտնի լեռներ	0 - 2	+ 2 + 4
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6	+ 5 + 9
Արարատ	+ 5 + 7	+12 + 14
Արմավիր	+ 4 + 6	+12 + 13
Վայոց ձորի լեռներ	0 - 2	+ 2 + 5
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 7	+10 + 13
Սյունիքի հովիտներ	+ 2 + 5	+ 9 + 12
Սյունիքի նախալեռներ	- 2 + 2	+ 5 + 7
ԼՂՀ	- 2 + 1	+ 5 + 6
Երեւան	+ 8 + 10	+ 9 + 13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*